Հավելված 2
Հաստատված է
Երևանի քաղաքապետի
«10» 04. 2019թ.
հ.1106-Ա որոշմամբ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ /ՀԱՏՈՒԿ/ ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Շահառուն բուժօգնություն ստանալու նպատակով դիմում է ներկայացնում ուղեգրող հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպություն, որին շահառուն կցագրված է:

2. Շահառուի բուժօգնություն ստանալու նպատակով ուղեգրող հանձնաժողովին կարող են դիմել նաև պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, բժշկական կազմակերպությունները՝ գրավոր միջնորդությամբ:

3. Դիմումին կամ գրավոր միջնորդությանը կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

2) ուղեգիր կամ տեղեկանք՝տրված հիվանդին բուժող բժշկի կողմից, այդ թվում՝ անհետաձգելի ցուցումներով հիվանդանոց ընդունված դեպքերում, կամ եզրակացություն՝ տրված համապատասխան նեղ մասնագետի կողմից կամ դրանց պատճենները,

3) սույն ենթակետում նշված խմբերից որևէ մեկին պատկանելությունը հավաստող, իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի պատճեն՝ առկայության դեպքում՝

ա. անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0.01 միավորից մինչև 30.00 միավորը ներառյալ անապահովության միավոր ունեցող ընտանիքների անդամներ,

բ. 65 և բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառուներ,

գ. փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքների անդամներ,

դ. ՀՀ մշտական բնակություն ունեցող ՀՀ քաղաքացիություն չունեցող հղի կանայք՝ միայն ծննդալուծումը,

ե. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ,

զ. ժամանակավոր խնամքի հաստատություններում խնամվող երեխա,

է. բազմազավակ (4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքի անդամներ,

ը. երեխա խնամող միայնակ անձ,

թ. Հայրենական մեծ պատերազմի և ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անդամներ,

ժ. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-րդ հոդվածի 6-րդ մասով բուժաշխատող (ավագ, միջին և կրտսեր) հանդիսացող անձինք, որոնց աշխատավարձը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը (150 հազար ՀՀ դրամը),

ժբ. Քառօրյա պատերազմի մասնակիցներ:

4. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են շաբաթը մեկ անգամ:

5. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի կողմից հրավիրվում է արտահերթ նիստ:

6. Հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ ընդունում է որոշումը:

7. Հանձնաժողովի որոշման հիման վրա տրամադրվում է համապատասխան ուղեգիր, որը նշագրվում է հանձնաժողովի նախագահի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ